

ՍԻՐԱՆ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱԿԱՆՈՒԹԻՄ ՀԱՅ ՊԱՇՏՈՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ԾՐՁԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1937



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՑԱԿՈՒՔԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՍԻՐՆ, ՀԱՅ ԱՍՍԱԳԻՐ

ԺԱ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՑՐՑԱՆ

1937 - ՄԱՅԻՍ

Թիւ 5

ԳԱՀՆ ՈՒ ԹԱԳԸ

Գահակալուրենեն յետոյ բազադրութիւնը . . .

Հինգ ամիսներէ ի վեր ազգային եւ հոգեկան եռուզեռի մէջ է աշխարհի ամենն մեծ կայսրութիւնը, Մեծն Բրիտանիա. մեծ իրապէս՝ զօրութեամբ, արդարութեամբ ու փառքով:

Մարդկութիւնը մահողող հաղամական տագնապները, որոնք զինքն ալ կ'անդունեան անտառակայս, պատճառ մը չեն որ անիկա թերանայ կամ յամենայ ցեղին արքայական Հարաւորեան համելի ազգովին զգացուած իր պարտականութեան մէջ:

Ներկայ աւրոյն սկիզբը խոհուն ոգեւորութեամբ տօնիչ վերջ իր Գահը, ան այսօր անհուն խանդավառութեամբ կը տօնի անհաւասիկ իր Թագը.

Գահն ու Թագը . . .

Առաջինը խարիսխն է, որուն վրայ կ'ամեանայ ընդարձակածաւալ պէտութեան իշխանութիւնը. ու ժաղովուրդն է որ վեր կը բռնէ զայն, իր արիւնեն եւ հոգին փողփողած արժանիքներու անձնաւորումը պատուելով անոր վրայ բազմողին մէջ:

Երկրորդը՝ յաղանակներու իր մցանակ կամ իրեւ յօր մասպատճեռուած պակր, տեսակ մը երկնային օրինութիւն՝ որով ժողովուրդին սերն ու երկիւղածութիւնը կ'ըղձայ բոլորուած տեսնել իր ազգային ու հոգեկան իշեալը խորեգանող Անձնաւորութեան նակասը:

Այ պէտ է դիմել քէ այս ժողովուրդին միքոնումին մէջ առաջինը ոշչափ ազգային մեծվայելցութեան եւ երկրաւոր ոյժի իր մըն է, իրեւ տունի մը՝ որուն արմատները ազգին կետանեն կը ծծնի իրենց սնունելը, նոյնաչի երկնային ընորհաց եւ հոգեւոր զօրութեան հօսն մըն է երկրորդը, իրեւ վիրին ձեռքով իշուցուած հօսն մը ի զոլուն Օծեային:

Այս է անօւուս պահանոր որ օրենի եւ վարչութեան, բարոյականի եւ ընկերային կարգուկանմին մարգերուն մէջ աշխարհի ամենն յառաջդիմական այս ազգը մինչ գրեք չոկ հաղամային արարագուրթեամբ կը կատաք իր արքային զահակալութիւնը, առաւելապէս եկեղեցական եւ կրօնական ծեսով եւ օրինութեամբ կը նուրբայածէ անոր բարադրութիւնը, այս մասին միակն ըլլարվ աշխարհն մէջ:

Ուր որ կը ծածանի բրիտանական գրօսը, մարդիկ այսօր նոն այդ խարհուդին մէջ մամափուակ կ'երգեն անօւուս օ՛Տ՛, պահենա՞ զրագաւորնօք, մինչ անդին կայսերական ոստանին Մայր Տաճարին մէջ անկիրխան եկեղեցւոյ պետք «Սամասիւմ եւ երգօն հոգեւորօք» Ն. Վ. Ճ. ՃՈՒ Զ. ի կը յանձնէ իր նախնեաց փառապան բազը:

Մրազին հաղորդ այդ խորհուրդին, եռուսակմի Հայոց Առաքելական Ս. Արքուոյ դարաւոր Ալիսը, Պատրիարք եւ Միաբանութիւն, հանգերծ ժողովուրդով, կ'ալօրին Թագաւորին բազաւորաց Անեղին Աստվածոյ՝ օրինել նորապակ բազաւոր ու բազուին, Մեծին Բրիտանիայ արքայական Տաճ Գահն ու Թագը, եւ նամայն կայսրութիւնը, իր մէջ բաղանդակուած եւ իր գրօսին ներեւ հովանաւորած բոլոր ժողովուրդներով միասին, կացուցանելով զայն ընթ միշտ Առաջնորդ եւ սաւարող բավանդակ աշխարհի խաղաղութեան:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԿՆԱՋԱՏԻԿ...

Եատ յստակ չէ այս բառին տօնադիտական իմաստը: Իր կարծուի թէ անիկա կը նշանակէ «երկրորդումն Զատկի» կամ «երկրորդ Զատիկի»: Բայց այս վերջին բառը յարութեան կիրակի հասկնալով լոկ: այնպէս որ այդ անոնով պարզապէս մատնանշուած պիտի ըլլար Զատկի կիրակին վերջ եկող երկրորդ կիրակին կամ նոր կիրակին, որուն համար ծննացոյցը վաղուց սովորութիւնը ըրած է գրել՝ «որ և ասի կրկնազատիկ»:

Պարագաները այնպէս տնօրինած են սակայն որ հոս, Հայ երուսալէմի մէջ, ոչ միայն բառակազմական այլ նաև խորհրդական (*mystique*) տեսակէտով աւելի սրտազգաւ առումի մը վերածուած ըլլայ Կրկնազատիկին իմաստը, գուտ կրօնականին հետ ազգային երանգ մըն ալ խառնութով իր մէջ, ինչպէս այնքան կը սիրէ միշտ ընել հայկական զգացումը:

Մենք հոս նոր կիրակին է որ սիրեբէն ի վեր անիմափան կանոնաւորութեամբ կը կատարենք Համաշխարհային Պատերազմի բիւրաւոր Հայ նահատակներու տօնը, յատուկ և հանդիսաւոր Ս. Պատարազով բայց թեայ բակի սեղանին առջև մերձակայ Ս. Փրկիչ վանուց, որ Յիսուսի երկրորդ բանտին վայրն է Կայիափայի ապարանքի զնափակին մէջ՝ ըստ հնագոյն աւանդութեան, և յետոյ մեծանանդէս հոգեհանգիստով և բանախօսութեամբ յարակից զերեզմանավայրին մէջ, Արարայի նահատակներուն մահարձանին շուրջը:

Այնպէս որ Բուն Զատիկին ետքը, որ իր՝ Քրիստոսի զոհն է, մարդոց համար մատուցուած, երկրորդ Զատիկ մըն ալ կը տօնենք, իբրև մեր զոհը՝ իրեն համար մատուցուած:

Ու ասիկա, հեռու թուուցիկ խոհանք մ'ըլլալէ, ստոյդ իրականութեան մը մասին կազմուած ճշգրիտ դատում մը միայն պէտք է նկատուի:

Ազգային ընդհանրական Մեռելոցի այդ տօնը, զոր հոգերոյն Գէորգ Ե. վշտակիր կաթողիկոսը ժամանակին սահմանեց այնքան իրազգած արդարամտութեամբ, զբեթէ կրօնական ծիսականութեան ձևի մը տակ՝ յուշածումն է այն մեծ սպանդին, որ աննախնթաց սաստիւթեամբ և անզթութեամբ կատարուեցաւ մեր ազգային կեանքին մէջ՝ քսաներկուու տարիներ առաջ, սոսկ այն պատճառաւ որ այս ժողովուրդը չէր ուզած և չէր կրցած հրաժարի Քրիստոնէութեանէն ետքը մանաւանդ շարունակ իր մէջ ապրած մտատիպարի մը սրբութենէն:

Ինչպէս միշտ, նոյնպէս և այդ վերջին շրջանին, այդ մտատիպարը ոչինչ ունեցած էր խոռվիչ՝ մեր վրայ գերիշխող պետութեան համար, այդ միջոցին ևս էապէս ոչ այլ ինչ լինելով ան եթէ ոչ ցեղային ինքնութեան պահպանումի անմեղ և խաղաղ ձգտում մը լոկ, ինքնին շատ հասկնալի՝ իր ինքնուրյն կրօնական կեանքը, զրականութիւնը, մշակոյթը և սնցեալին զիտակցութիւնը ունեցող ժողովուրդի մը համար, Բայց քաղաքական կնճռուտած հանգանանքները այնքան ցնցած էին ուղեղները, այնպէս վերիվայր դարձուցած էին խլճմտանք-

ներուն պաքը որ կարելի չեղաւ ո՛չ տեսնել և ո՛չ ըմբռնել իրականութիւնը, ու քսաներորդ դարու քաղաքակրթութեան պայծառ լոյսին տակ, իրաւունքի, արդարութեան, ազատութեան և յարաշղիմութեան սրբութիւնը տարփողող, մեծ ազգերու նայուածքին առջև թոյլ տրուեցաւ որ հինաւուրց և ազնուական ժողովուրք մը իյնայ մահամերձ՝ իր պատոյն և հաւատքին խորանին ներքեւ, զո՞ն անպարտ:

Այդ զո՞նին, անպարտական այդ պատարազին տարեգարձն ու յիշատակն է սոսկ որ կը կատարենք անա ազգովին: Կրօնական տօն մը, հոգևոր յիշատակութեան գործ մըն է միայն եղածը: Հեռու մենք՝ որ և է դիտում վրէժինդրական զգացումներու հրահրութեան, այսպիսի առիթներով: Մեր հաւատքը անխախտ է աստուածային արդարութեան մասին, և զիտենք թէ մարդկի չէ որ պիտի կարենային հասուցանել զայն: Մենք կ'ուզենք յիշել միայն գանոնք որ մեռան ազգին համար, ու յիշել նոյն տաեն թէ չէ մեռած այդ ազգն ինքնին. այսինքն խորհիլ թէ կորսնցուցինք բայց չկորսուեցանք, և թէ պիտի կորսուէինք եթէ չկորսնցնէինք:

Մտափաքրի մը, այսինքն սուրբ իտէալի մը համար էր որ կատարուեցաւ սպանդը: Ամէն զաղափարական զօրութիւն՝ ապրելու համար՝ պէտք ունի նուրբումի, նահատակութեան, անմահութեան տանող մահուան: Եթէ չգանուէին մեր մէջ մարդկի, որնաք յանձն առնէին ի սէր մեր կորսուիլ այս կեանքին համար, մենք ամենք պիտի կորսուէինք այդ կեանքին համար: Պիտի լինէր արդար, այդպէս միան եթէ ամէնքս միահամուռ ոտնակլիւինք մեր իտէալը, ուրանալով զայն, ու նետուէինք յայնկոյս: Շահելով մեր փիզիքականը՝ պիտի տուժէնք հոգեկանը:

Չեղաւ այդպէս, վասնզի եղան նահատակուողներ: Իրենց մահը փրկանքը եղաւ մեր կեանքին. իրենց զերեզմաններուն վրայ լուցուած ճրագներն են որ կը լուսաւորեն հիմակ մեր ճամբան դէպի մեր ճակատազիրը:

Կը տօնէնք իրենց մահը, բայց այդ մահուան մէջ ու նովին իսկ՝ մեր կեանքը, անմահութիւնը ազգին:

Մահով ստացուած անմահութիւնը Զատիկին է լինքնին. ու մեր մահով շահուած մեր անմահութիւնը՝ մեր Զատիկը բովանդակապէս, կրկնազատիկ՝ իրոք և իրաւամբ:

Զենք մեռած իբրև ազդ, կ'ապրինք ու պիտի ապրինք. այս պէտք է լինի կրկնազատիկին պատզամը, ուզուած ամէնուս: Բայց կ'ապրինք, եթէ յիշել կարենանք միշտ թէ նահատակներու ինչ մեծ բազմութեամբ է որ արդարէ շըրջանակուած է մեր պատմութիւնը, և եթէ կարենանք պատկառ մնալ անոնց յիշատակին, և այն իտէալին՝ որ իրենցը եղաւ և պէտք է լինի ընդ միշտ մերինք ևս:

Ու պատկառ մնացած կ'ըլլանք այդ յիշատակին և մոտափիպարին, եթէ մեր ազգային գոյութեան իբրև գերազոյն վարիչ ոյժ ընդունինք միշտ ու մի միայն հաւատքը Աստուծոյ և ապագային վրայ. եթէ, առաքեալին բառով, համբերութեամբ, այսինքն յարատեռութեամբ ընթանանք մեր առջև բացուած ասպարէզին մէջ, որ կեանքի ռազմադաշտն է, ակնկառոյց մի միայն խաչի գրօշին, և մեզի գորազուի ճանչնալով միայն զիսաւու:

Յիշել հարկ է սակայն հոս թէ համբերութիւնը այն առաքինութիւնն է, որուն բուն կազմիչ տարրերն են քաջութիւնը և յոյսը. առաջինը՝ իմաստու-

թեամբ գործադրուած, երկրորդ՝ անտրոտունչ երկայնմտութեամբ պահպանուած: Եթէ անհատին կեանքին համար կարեոր է այսպիսի բաղադրութեամբ ձեռք բերուած համբերութիւնը, անիկա ա'լ աւելի կարեոր է և անհրաժեշտ ժողովուրդներու կեանքին համար, որ շատ աւելի հայամէտ և ընդունակ է արկածաւորուելու: Այնինչ անմատչելի տառելութիւնները և յաջողութիւնները ինքնին կը մօտենան անոնց որոնք համբերութեամբ կը պատրաստուին ատոնց: «Բանականութեամբ կարելի է, կ'ըսէ Տիկին Տը Սէվինեէ, հանդուրժել նախատինքներուն, քաջութեամբ կարելի է մաքաղի անոնց դէմ, բայց կրօնով եւ համբերութեամբ միայն հնար է յազթահարել զանոնք»:

Անուրանալի է արդարեն ներքին աղերսը, որ կայ այս երկուքին, կրօնքին և համբերութեան միջև: Եթէ կրօնքը, իրեւ սէր և լոյս, նպատակն է կեանքին, համբերութիւնը, իրոն զգացական և իմացական սեւումի և ինքնախորացման վիճակ, անոնց տիրանալու ապահովագոյն միջոցն է: Ատոր համար է որ խակապէս կրօնական, այսինքն աստուածայինին խոկումով թաթաւուն հողիներն ընդհանրապէս մեծ համբերութեամբ զօրացած հողիներն են, ու գէպի իրենց ապագան հաւասարի զգացումով կ'ընթանան այն ազգերը, որոնց մէջ համբերութիւնը արհամարհուած առաքինութիւն մը չէ երբեք:

Իրաւումը ըսուած է թէ ոչինչ կրնայ կատարուիլ լոկ հանճարին խոյանքը, եթէ անոր հետ չէ միացուած նաև համբերութիւնը:

Չենք մեռնիր իրեւ ազգ, եթէ պատկառ մնանք գարերէ ի վեր պաշտըւած մտատիպարին. այսինքն եթէ ապրինք և զործնեք համբերութեամբ, որ յուսալից և երկայնամիտ քաջութիւնն է, իմաստութեամբ և հաւատքով զործագրուած: — Ահա՝ մեր անմահ նահատակներուն յիշատակին պատգամը մեղի. ահա՝ և դասը՝ զոր մեր կրկնազատիկին խորհուրդը կ'աւանդէ ամէնուու:

* * *

ՈՂԶՈՅՆԻ ՊԱՏԳԱՄ

ԶՈՐ ԶԱՏԿԻ ԿԻՐՍԿԻ ԱՐԱԿՈՏՈՒՆ

Ս. ՑԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՁԱԼԻՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՋԱՅՐԸ ԶԱՅՆԱՍՎԻՒՌՈՎԸ ՈՒՂՂԵՑ
ԷՆԴՀ. ՀԱՅՈՒԹՅԱՆ, Ս. ԳԵՐԵԶՄԱՆԻ ՍԵՄԻՆ ԱՌՁԵՒ ԿԵՑԱՆ

Ազգի իմ սիրելի, ժողովուրդ հայոց, որ կը բնակիս աստ, Պաղեստինի սահմաններէն ներս, և այլուր ի սփիւոս աշխարհի, իմ և իմ սիրելի միաբանութեան սիրող գէպի քեզ է որ կը թոշի նուիրական այս վայրիկեանին. ու կանզնած սեմին վրայ Քրիստոսի Ս. Դեբեզմանին, պարպուած այն զերեզմանին, որուն հաւատքը իրը 20 դարերէ ի վեր կը լեցնէ և կը զօրացնէ ահա քրիստոնէական կեանքը, կը փափաքիմ իմ և ամէնքիս օրնութեան և շնորհաւորանքի ողջոյնը աւանդել Քեզի, Քրէշի Ս. Յարութեան տօնի շնորհարեր այս առաւտուուն:

Կեցած եմ ճիշդ այն տեղւոյն վրայ, ուր, քրիստոնէութեան առաջին կիրակի միաշաբաթի լուսաբացին, բարեպաշտ կիները յարութեան նախընծայ աւետիսը ընդունեցին հրեշտակէն: Այդ աւետիսին արձագանգն է որ գարերէ ի վեր կը պատուաքի տակաւին կամարներուն ներքէ այս երկնանման տաճարին, զոր հըն-

դոյն օրերու քրիստոնէական երկիւղածութիւնը կանոնած է Աստուծոյ Որդույն երեքօրեայ թագումովը և հրաշալի յարութիւնովը յաւիտենապէս նույիրազոր-ծրւած այս վայրին գրայ:

Դոյն այդ աւետին է՝ որ նոյնութեամբ կը փոխանցեմ Քեզի. ա՛ո և սլահէ զայն, իբրև սպեղանի քաղցրութեան՝ վիրաւոր սրտիդ, իբրև խունկ օրհ-նութեան՝ հոգւոյդ խաղաղութեան, և իբրև պատզամ միմիթարութեան բովան-դակ կինացդ:

«Անրդարի յարեաւ Քրիստոս». այս բառերը որոնք պատմական իրողու-թիւն մը կը բացայայտեն Յիսուսի անձին տեսակէտով, նոյն ատեն հոգեկան մեծ ճշմարտութիւն մըն է որ կ'աւետարանեն ամէն անոնց՝ որոնց համար խա-չին կրօնքը — հեռի ցնորք մը լինելէ — ընդհակառակն քարոզութիւնն է բար-ձրագոյն և գերազանց իմաստութեան:

«Քրիստոս յարեաւ», «Քրիստոս չէ մեռած», այս խօսքը ըստ այսմ կը նշանակէ թէ ճշմարտութիւնը, բարութիւնը, սէրը, յոյսը անմահ են: Անսոնք կինան խոցուլի, բայց չեն մեռնիր, կման պղտարիլ՝ բայց չեն խաւարիր երեքը. ինչպէս ափ մը յարդի ծուխը թէ կրնայ վայրկեան մը ամբողջ երկինքը ծածկել մեր աշե-րէն, բայց չի կրնար բնաւ. չնչել զայն: Յարութիւնը, այսպէս, աւետարանա-կան բարյականի կրկին առաւմով, կը նշանակէ նախ բուն կեանքը՝ տեսական կեանքը, որ է անմահութիւնը. Երկրորդ չնարատակուող յոյը, որ մաքուր իսէա-լին պաշտամունքն է, և երրորդ՝ մեղքէն չապականուող՝ ընդհակառակին անոր վրայ մաքրիչ ներգործութիւն մը ի յայտ բերող հողիին սրբութիւնը. այդ ըն-բունոցութեամբ չէ՝ որ կը բարձրացնենք փրկութեան խորհուրդին նշանն ու ըն-դունարանն՝ ըսելով «Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողու-թիւն մեղաց»:

Այդ մտածութեամբ և հաւատքով է որ, Քրիստոսի սուրբ յարութեան աւետիսը կ'աւանդեմ քեզի, իր անապական այս սուրբ գերեզմանէն, և կը փա-փաքիմ սրտաղինս՝ որ այդ զգացումով և համազմամբ ընդունիս դուն զայն: Մը ազգ, աւելի քան զքեզ, ազգ իմ սիրելի, պէտք ունի այդպիսի պատզամի մը սրտապնդող սփոփանքին: Հաւատա՛ Քրիստոսի յարութեան և Քրիստոնէական առաքինութեանց կենդանարար զօրութեան. մի՛ ամպոտեր յոյսիդ պայծառու-թիւնը, մի՛ թոյլ տար որ կեղտառի հաւատքիդ սրբութիւնը, մասցիք միշտ մը-տափարիդ բարձրութեան վրայ, ո՛քան ալ դառն լինի բաժակը, զոր քեզ կը մատուցանէ աշխարհ: Սիրէ երկիրը՝ ուր կ'ապրիս, և ժողովուրդը՝ որ ասազն-ջականած է զքեզ, ու սիրելի ընծայէ քու ցեղը անոնց՝ քու ուղղամիտ հաւա-տարմութեամբդ. սիրէ ապգդ ու մայրենի Ս. Եկեղեցիդ Հայաստանեաց. աղօթէ ամենուն երջանկութեան և աշխարհի խաղաղութեան համար, աղօթէ Հայաս-տանեաց Հայրապետութեան, և, եթէ հսար է, նաև առաքելական Ս. Աթոռոյս հաստատութեան համար, որպէսզի յարուցեալ Փոկիչը արիացնէ զմեզ՝ քրիստո-նէութեան այս սուտանին մէջ աշխարհի նշանաւորազոյն ազգաց չարքին վրայ միշտ բարձր պահելու հաւատքդ ու պատիւդ: Ողջո՞յն Քեզ, ողջոյն խաղաղու-թեան և սիրոյ. թոյլ տուր որ իբրև վերջին բառ մաղթանացս զոչեմ ի խորոց սրտի. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: ու զուն պատասխանէ սրտաթունդ. «Օքհնեալ է յարութիւնն Քրիստոսի»: ամէնք:

ԽՍԿԱՎԻՍ ԲԱՐԻ ԼՈՒՐ ՄԸ



Անրիիհասի Կիլիկեան Հայրապետանոցի գետինը եւ Շ.Ա.Ռ. որոնց վարձակալն էր ցարդ Կաբողիկոսութիւնը, խանի մը օ՛է ի վեր դարձած են ազգապատճան, այսինքն սեփականութիւն նոյն Կաբողիկոսական Ս. թոռին:

Ս.յա առանձնաւուրիումը Ս.զգը կը պարտի վեհանձն բարերարութեան մը, զոր ինձնայուրզոր սիրով կատարեց Գահիրէաբնակ Տիար Սիմոն եւ Տիկին Մարիլ Գայրզնեան հայ ամոլը, մէկ ամսուան ընթացքին երկու անգամնեւ չորս հազար անգլ. ոսկոյ գումար մը դնելով տամադրութեանը տակ ծերութիւն Սահակ Վեհին, որ զայն անմիջապէս փոխանցած է արդէն Ամերիկա, Կիլավեհեան եւ Գարակիօգեան Տանց միջոցաւ յատկացուելու համար իր նպատակին:

Ս.Պ.Ն. որ նոգելոյս Բարգէն Վեհի վախճանեն վերջ իր էջերը լայնութեան բացաւ՝ հանրութեան ազգամէր ուսարդրութեան յանձնաւարելով այդ զեշինին զնման ամերածեւութիւնը, ամիսուան ինքնուանուլ կ'արձանագրէ այսօ այս բարի լուրը, Ն. Ս. Օծորեան Կիլիկիոյ Ս. Ե. իսկառ Հայրապետին ներկայացնելով Ս. Ս. թոռուոյ Միաբանութեան յարզակից խնդացութիւնը այս մասին, եւ պատուական բարերար ամոլին՝ Երախալզզած ժնուրակալութեան ողջոն սիրալիր: — Ս. Պատրիարք Հայրը, որ կանուխէն ժեղեսն էր իրուրիթեան, գրած է արդէն ընորհաւորութիւն՝ Անթիկիաս, եւ ընորհակալաւթիւն եւ օրհնութիւն՝ Տիկին Գայրզնեան ամոլին, զերմագին գուլիլ: Եւ զնահատելով իրենց այս վեհովք արարի:

Ուրախ է այժմ անուուծ ծերութիւն Վեհը, իր իննանամեայ կեանի կանքեղին առկայծ լոյսին մէջէն տեսնելով իր նծդին Ա. թոռին հաստատման ամենէն լուրջ յաջողութիւնը. իրենց անմահական կայֆին մէջ կը բերերին նոզիները արուակից Վեհին եւ տարաբախ Շահէ Մթաղաթին, տեսնելով որ ազգը անտարեր չէ մնացած իրենց ծրագրած եւ սկսած զորժին հանդէպ: Գոհ է անուուծ Կիլիկեան Ա. թոռին վերակազմեալ Միաբանութիւնը, իրենց ընծայուած այս հաջալերանին առցէն, զոր անուուծ պիտի նկատ երաւէր առաւելազոյն նույիրման եւ աշխատանքի: Գոհ է անտարակոյն Ս.զգն համայն, իր նույիրապետական մէկ Ա. թոռին ապագան Երաշխաւորուած տեսնելով Հայ Եկեղեցոյ ամենէն տանապալից այս երջանիք: Ու, ստեն վերջապէս, երջանիկ են անուուծ ամենն առէի, ամեն սիրերէ այժմ օրհնուած բարերար ամեւախնեները: Իրենց ընտանեկան կեանքի վանդալը ցարդ չէր բերերած զաւիի նուուղունեներով, բայց Ս.սուուած հիմակ ուրախամիս հաղցուրթեամբ կը բընակեցնէ զիրենէ, բայց բանի Սաղմօսին (Ճ.Բ. 9) իրենց տան մէջ, իրեւ ծընորք «որդուովք բերկրեալ» զի իրենց հանդէպ եւս ուղիական սէր պիտի տածեն յես այսու Անթիկիասի երջանաւարեները:

Խոկ այս ամէնելն վերջ եւ վեր ուրախ ենի մենք՝ այս բարեզործական եղիութեան մէջ տեսնելով ամենէն աւելի սա իրաւանութիւնը թէ Հայուն սրտին մէջ չէ մեռած իր Եկեղեցիին, իր հաւատքին, իր նոզեւորականներու կրութեան սէրը, եւ անիկա, ինչպէս ինք դարերուն, նոյնական եւ այժմ կը մնայ դեռ. Ա.զգին կենդանութեան ամենէն կարեւոր ազդակներէն մին: Այդ ուրախութիւնը կը պարտի ազգուասիր ազգայինի մը, որուն ինչ ազգական եւս ենիք բայց նոյնական է ան բարեպատճակ համանայի մը, եւ եղայրը՝ մեր միաբանական եղայրակիցներէն նոզիլոյ Տ. Մաքրէս եպս. Գայրզնեանի, որոնց յիշատակն անգամ մը եւս կ'օրհնուի պինկովք անուշիք:

ԿՐՈՆԱԿԱՆ

ԻՐ ԼՈՅՍԻՆ ՄԷԶ^(*)

Կ'ըսէինք մեր նախորդ շաբթուան խօսքիրուն գերջաւորութեան մէջ թէ պարտինք Աստուծոյ գաղափարը գնել մեր կհանքի հորիզոնին ամենէն մատուցու բարձրակէտին վրայ, անոր լոյսին մէջ տեսնելու համար ճանապարհը, և ճանչնալու համար ճշմարտութիւնը:

Արդ, բազմաթիւ և բազմապիսի են միջանհերը և եղանակները, որնցով կը բնանք և պարտինք ինքզինքնին ենթակել Աստուծոյ գաղափարին լուսաւորող ներգործութեանը. ճշմարտ հաւատացեալին կհանքը այդ գտառումէն միայն պէտք է ըստանայ իր ուղղութիւնն ու թափէ: Եւ ուրովհետեւ երկար պիտի լլալ մահրամանն օրէն յառաջ բերել զանոնք հոս, կ'ուղենք բաւականանալ անոնցինք մի քանին, երեքը միայն, ներկայացնելով հոս: Ցիշել զինքը, ազօթել իրեն, պատուել զինքը՝ իրեն ստուգապէս ենթարկեալ ճանչնալով ինքզինքնիս:

Ցիել զիսաւուած. այսինքն իրամով մտագրաւուիլ. ապրեցնել զինքը մեր մտածագութեան մէջ. թոյլ շտալ որ անոր խոկումը անցաւոր պատահականութեան մը պէս անհետանայ մեր ուշագրութեանէն: Այսինքն մեր մէջ տիրական գարձնել իր խորհուրդը. չմոռնալ թէ ինքն է կենաքին պատճառն ու հելինակը, անոր տէլն ու տնօրէնը, անոր օրէնքն ու նպատակը, և թէ տիկներքն համօրէն պարգեւն է իր սիրոյն: — Բայց, ուշագրութիւն, եր կ'ըսէնք յիշել, չմոռնալ զ Աստուծած, ըսել չենք ուզեր երբեք թէ իր խորհուրդին տալով մեր մտածումը, պէտք է մոռնանք աշխարհն ու երկրաւոր կեանքը: Քրիստոնեային կեանքը նոգեոր է իր գտառումը, բայց մարմաւոր՝ իր ընթացքով. երկնաքաղաքացի ենք իսէւարով, հանդերձեալի և անմահութեան մեր հաւատացով. բայց երկրի վրայ, այս նիւթական կեանքին մէջ կիրականանայ մեր գոյութեան մէկ մասը. կ'անցնինք ասկէց՝ հասնելու համար հոս և Աշխարհ ճամբար մըն

է զոր պարտինք կտրել աւարտել՝ մտնելու համար մեր բուն օթևանը, որ երկինքն է. ու այդ ճամբորդութիւնը պէտք է կատարենք՝ ակնդէս միշտ այդ բուն օթևանին, այսինքն առանց բնաւ մոռնալու թէ հ'ն է որ կ'երթանք:

Այնպէս որ, աւելի ճիշդ կերպով ներկայացուցած կ'ըլլանք բուն հարցը, եթէ ըսենք թէ երկնաւոր կեանքը մեզի համար նպատակ է, երկրորդը միջոց: Այս տեսակէտէն միայն պէտք է նկատի առնենք ինզիրը, երբ կ'ուզուի բացատրել թէ ի՞նչ պէտք է համենալ օվեսաւած յիելը խօսքով:

Քրիստոնէական ըմբռնումով, Աստուծոյ և հոգեւորին հակադրութիւնն է աշխարհ կամ նիւթը, կամ այս երկուքին անձնաւորեալ պատկերը ներկայացնող արնետեսական այն զօրութիւնը, որ, ստացուածքը, հարառութիւնը կամ զրամն է, և զոր Աւետարանը անգամ մը Մամոնայ բառով կ'անուանէ, երբ կ'ըսէ. «Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ Մամոնայի»: Արդ, ի՞նչ է Յիսուսի խօսքին բուն նշանակութիւնը. բացարձակ իմաստ մը կամ այդ բառուն մէջ յարաբերական նշանակութիւն մը. համ է արքարե երկուքէն մէկը բորոյդին արհամարհել, միւսը սիրել կարենալու համար. կարելի չչո երկուքին մատուցած ծառայութիւնները ներդաշնակել իրարու հետ բարյական տեսակէտի մը առջե, ու, մեր անկիւնէն նայելով գաղափարին վրայ, մին չմոռնալ՝ միւսը լաւագոյն յիշել կարենալու համար նոյն խսկ: Այո՛, կարելի է այդ. ու Տնաեսին առակը այդ մտածումն է որ կը պատկերազարդէ շատ գեղեցիկ կերպով:

Հարէ չկամ նիւթը կամ անոր տնտեսական ոյժը անպատճառ չարիք սեպել. ամէն ինչ ոյժ է, կրնայ բարութեան գործիք կամ միջոց պառնալ՝ զերազանց բարի նըպատակի մը ուղղուելով: Ոչ թէ նիւթը է չարիքը, այլ նիւթական մտահոգութիւնը. ոչ թէ հարսանալն է մեղքը, այլ միմիան ինքինքին համար հարստանալը. անձին գանձելը, ինքինքին համար դրամ գիղելը. մինչեւ յշԱստուած մնձանալը, այսինքն բարի կամ աստուածային նպատակի ներու համար հարստութիւն շահիլը իսկապէս բարի է և բարյական: «ՅԱստուած մնձանալը».

(*) Ապրիլ 6-ի եկեղեցին Ա. Պատրիարք Հօրիստոս քարոզը:

մար, բարի միջոցներով և բարի նպատակի համար հարստանալ. առող մէջ է ահա քրիստոնէական բարյականնին ամենէն թանկառ զին սկզբունքներէն մին, որուն մէջ Աստուած և Մամոնան՝ հաշտուած՝ ներդաշնակուած՝ կը միանան իրարու, կեանքը իր ամենէն վտանգաւոր կողմին վրայ, նիւթին մէջ, բարութեան փոխարկելու համար ու երանի աղքատաց հոգւով, անոնց համար է այս երանութիւնը, որոնք իրենց ստացած կամ շահած հարստութեան տէրը ինքնազնին չեն համարեր, ու Աստուածոյ կամ հոգեկոր նպատակի կ'ընծայեն զանոնք, որոնք, երբ բախտը անվերջ նպաստաւուրանինը կը հրճուեցնէ զիրենք, կը խորհին ջիսուսի հետ. «Ձինչ օգուտ է մարդոյ, եթէ զախարհ ամենայն շահեսցի եւ զանձն իրը տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ գրկան ընդ անձնին իւրոյու:

Ներկայ կեանքը կ'անցնի անհեռակայելի արագութեամբ. և օր մը երբ հասնինք անոր զիրջին եղրին, մեր արժանիքը պիտի կը ունի, Աստուածոյ և ույն իսկ մարգոց զատաստանին մէջ, ոչ թէ մեր կուտակած հարստութեանց չափութ, այլ անոնց հանդէպ մեր կրած զրկանքներուն աստիճանովը. Չմունանք երբեք թէ զայելիք և զրկանք ժամանակաւոր են. միակ բանը, որ պիտի մնայ մենէ և պիտի կարենայ ընկերանալ յաւիտենականութեան մէջ՝ մեր գործերուն կրօնական ու բարյական արժէքն է: Անսնոք են երջանիկ, որոնց համար իրենց մահէն ետքը ուրիշներ պիտի կարենան ըսել, ըստ Յայտնութեան խօսքի. «Կործ ք իւրեանց չոգան զին նոցառ:

Ցիշէլ զ Աստուած՝ նիւթին հետ, անոր առընթեր, անոր համբնթացարար, անկէ վեր. զայն ծառայեցնել իրեն, զ Աստուած չմոռնանու, անոնք մատպութեւու, անոր նուիրեւու, ամենէն գեղեցիկ կիրակերէն մին է: Քրիստոնէին լաւագոյն պարտականութիւններէն մին:

Ազօրել Աստուածոյ. Աստուածոյ հանդէպ ուրիշ բայց աւելի կարենոր պարտականութիւն մըն է անչուշա աղօթքէ: Ցիշէլով զ Աստուած, խորհելով յաճախ իր մասին, զինքը պատրուած՝ իր պատկերը նորոգած կ'ըլլանք մեր հոգիին մէջ: Բայց աղօթելով, այդ պատկերը ապրեցուցած՝ իրեն հետ կեն-

դանի յարաբերութեան մէջ մտած կ'ըլլանք. իրեն հետ խօսած ու զինքը բնակեցուցած կ'ըլլանք մեր մէջ. զի աղօթքը, ոխօսք ընդ Աստուածոյ, իսկապէս խօսակցութիւնն է Աստուածոյ հետ: Մարդու չի կրնար երկար ատեն և հարազատօրէն պատել յիշողութիւն մը, եթէ հոգածու չըլլայ իր մոտածումը ամրապնդել և սեենու յիշուելով անձին կամ գաղափարին վրայ, որու անդամենա անբաղապնալով անոնց կանոնաւորագէս: Այնպէս որ, կարենալու համար զ Աստուած յիշու պատաշամ կերպով և երկիւ զածօրէն, անհրաժեշտ է, պարփերար, երրեմն երբեմն կամ մեր կեանքը կարեւոր պահերուն, մտնել իրեն հետ յարաբերութեան մէջ, մտնելով իր ոգերորդ՝ խօսուն խորհուրդին մէջ, ու ցանկալով ի սրտէ որ ինքն ևս մտնէ և ընակի մեր հւիթեանը մէջ:

Ցիշէլ զ ինքը, բայնք, մեր առաջին պարտականութիւնն է, բայց աղօթել՝ աւագ պարտականութիւնը: Ցիշէլով զինքը՝ կը պարտաստուինք՝ կերպով մը՝ աղօթելու. ու աղօթելով կը մշակնել պարզապէս իր յուշքը, իր յիշատակը և անէկ բլիստ բարիքները. աղօթքը՝ սեենումը, ամրացումն Աստուածոյ յիշողութեան: Աղօթելը ինքնին տեսակ մը յուշածում է, աւելի խոր՝ աւելի մանրամասնեալ պարունակի մը մէջ, արգինքէն պատճու վերանալու, պատճաւէն արդիւնք իջնելու սրտացութեամբ: Իրեն ուղղուած մէն մի բասը, մանաւանդ ա'յն աղօթքէն՝ զոր ինքը սովորեցուց իր աշակերտներուն և մարդկութեան, աղբիւր մըն է լոյսի և ներշնչութեան, որ կը պայծ առացնէ միտքը և կ'ըլլագրակէ՝ կը լայնցնէ սիրտը:

Այսպէս, երբ կ'ըսենք «Հայր միր», երկնք ուղղելով մեր յարտածքը, կը յիշենք յաւթենական այն բարիքը, որով իր զգացումն առջեւ կ'նդրայրանայ բովանդակի մարգկութիւնը: Երբ կ'ըսենք. «Եղիւցին կամք քո», կը յիշենք թէ միակ զորութիւնը, իմաստութեան և բարութեան անհասանելի և միակ օրէնք մըն է որ կը վարէ կեանքն ու տիեզերքը, և որուն առջեւ ամէնքս խօսնարէ երկրպագութիւն եւ համակերպութիւն կը պարմիք: Երբ կը հառաչենք. «Հաց միր հանապագործ», կը լեցուի սիրտերնիս յիշատակովը անցիշաշար իր սիրոյն, որով ամէն օր իր արեն ու ցո-

զը կը շնորհէ մեկի, ու կ'օրհնէ մեր քըլը-
տինքին գինը, պատուով և արդարութեամբ
շահերու համար մեր ասօրեայ պատիւն ու
հանդիսարք Երբ կ'աղօթենք ուրպէս եւ
մեք թողումք մերոց պարտապանաց, կը
խորհնիք մէ երբեմ թռչունի մը կուրծքին
կարձ հեքք անզամ չունեցող մեր սիրտը
որ այնքան լյան է, զատարկամիտ գոռու-
զութեանց հանդուրժելու և այնքան նդճիմ
հոգիինք մեր գրայ նետուած նախատինք-
նիրուն ներելու համար, որքան աւելի ան-
սահման էք անշուշու իր պիրայն և գութին
չնորհը, մարդկային անօրէնութիւնները թո-
գութեամբ քաւելու համար: «Մի՛ տանիք
զմեզ ի փարձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի
չսրէն»: Իսկ նա որ սրտանց կ'արտասանէ
այս բառերը, ինք միայն կրնայ զգալ թէ
կործանիւ հեշտութեանց, յիմարական հր-
պարտութեանց հրապուրող ծուզանիներւն
գէմ ի՞նչպէս պատուարուու կը գտնէ ինք-
զինքն, երբ խաչին նշանովը կը կնքէ նոյն
ատեն իր մարմինն ու հոգին:

Աղօթքը առ Աստուած տանող ճամբան
կէն է արգէն, կամ, ինչպէս Համբրնացի
կ'ըսէ, շարժումն է չուանին՝ որուն ծայրը
կապուած զանգը երկնից մէջ կը հնչէ: Ով որ
չգիտեր աղօթել, չի կրնար ճաշակել կրօն-
քին միթիքարութիւնք. զի ծէսը կը հմայէ
միայն, մինչ աղօթքն է որ ոնուցանէ և
կը լուսաւորէ հոգին: Աղօթքի խորհուրդին
զրայ կը կանոնի Եկեղեցին: Ի՞նչ պիտի ար-
ժէին այս մեծակառույց ունենի ու կամար-
ները, իթէ անոնց բրած գմբէթին տակ չը
լսուէր աղօթքին ձայնը, ի՞նչ պիտի արժէին
այս չքեղանքը, այս բազմութիւնը, խուա-
րը խոցոտող այդ լոյսերը, իթէ ամէն առա-
ւոս չլսուէր սարկաւորին ձայնը. «Ճա-
բարձուու զձեռն մեր ի սրբութիւն առանց
բարկութեան եւ Երկմտութեան», իթէ տը-
ղաքը Ս. Գլխազիքին այս բանաւոր զաւ-
ները չերգէին. «Առ աղբիւր ես ծարա-
ւեաց... արբ' մեզ զբածակ էս խոյցրաւ-
թեան յիսնպա ալյեւեկդ», իթէ ամէնքս
միսախին չձայնէինք. «Ենորհուրգէ շարին,
խափին զնողին, խոյացա առենն. Սէր ա-
նուն Թիսուս, սիրով Էով նելեա, սիր իմ
հաւեղին»: Իթէ քահանան չաղօթէք. «Տէր
զօրութեանց, խաղաղոցն զանձինն մեր յա-
մենամ սատանայսկան խովուրեանց եւ
յաշխահական զբօսանաց»: «Ճայեա՛ յեր-

կրպագուրիւնս մեր, եւ ուսո՞ մեզ առնել
զարգարութիւն հուաթութեամբ: Ի՞նչ ան-
փոխարինեի հարատութեամբ օժտուած է
մեր հոգեոր կեանքը, մեր Սուրբ Եկեղե-
ցին այն չքնաղ աղօթքներով, որոնք կը
զարգարեն մեր ամէնօրեայ պաշտամունքը:
Ի՞նչ ազնուական գեղեցկութիւն կայ «Սուրբ
եւ Տեղ Աստուած մեր, նզօր եւ փառաւո-
ւեալ, որ նսիս ի կառւ եերիքականսա»:
Զաւաւօսու ալօրս եւ զբանաց պաւ-
սոն ընթալ ի որ անապահն եւ յերինային
խորանսկ...», «Հայր գրած», «Յոյս կե-
նաց», «Ծնորհատու բարեաց» և ի մերձե-
ալ երեխային համբանամք զձեռն մեր...»
աղօթքներուն մէջ. Ի՞նչ խորսոված քաղ-
ցրութեան զրայ կը ծաւալի առաւտեան
կրեստակալին երգը՝ «Փառք ի բարձունս»,
ի՞նչ վաեմ թոխչքի մը կը լէէ մեր հոգին
երեկոյեան Լոյս զուար ո՞ր, անզնային
արհաւերքներու զրայ լոյսի ի՞նչ ճանանչա-
րէ ասանանքներ կ'իջեցնէ նարեկացին, իր,
պ'զ մութին, ամէնուս սիրտերուն մէջէն,
իրեւ իւրեահազորդ երգէններու կը ոսթի
մը խորքէն, կ'իրէ իր իսկ հոգիովը, «Բա՛ր
յինեն, ողորմած, զանթերեի ծանրութիւնս.
անշրջետեա՛, հնարաւու, զմանացու կրու-
թիւնս. աւարեա՛, միօս յալրող, զմաքոյին
հանութիւնս, բացատեա՛, վերնային, զմո-
լիյին մասախուղունս. կնենա՛, կեցուցի, զիո-
րուախին ընթացաւունս». իսկ Ծնորհաւուց 24
տունները, որնցմագ, իրեւ օրուան երկիցս
կրուտանեակա ժամաներուն խորհուրդով մեր
հոգիին յացանազացքը կ'ուզենք կատարել
աստուածպաշտութեան ճամբուն զրայ, «Կ»,
այս ամէնը ի՞նչ կազդոյր կը պարզէնն մեր
սիրտերուն և ի՞նչ խաղաղութիւն միտքին,
իթէ զգացուին և արտասանուին, իթէ մտա-
ծուին և արտաքերուին արդարեւ հոգւով և
ճշմարտութեամբ:

Աղօթքը կը սրբէ անձը, որովհետեւ յա-
րաբերութեան մէջ կը դնէ զմեզ սրբութեան
աղբեւրուն հետ. իր սրտին խորքէն Աստու-
ծոյ հետ խօսիլ զիտոցն է միայն թէ կեանքի
ի՞նչ մաքուր և յորդ ոյժ կը փոխանցուի
լուն, իր կարենայ իր արտող կիղճը գնել
Ծնորհաւույ առ բառերուն մէջ. «Ամենա-
խնամ Տէր, թո՞ղ քու սուրբ երկիւրդ ոս-
տիկան ըլլայ աչքերուս որ այլ ևս յանկա-
կան զգացումով չհային որ և է գեղեցկու-
թեան, ականջներուս՝ որ չախորժին չար

խօսքեր լսել, ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեն, ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաններ չերթան, չչո՞ք քու ձեռքի մէջին են հոգեոր և մարմաւոր կեանքին շարժիչ թելերը, այնպէս մը ուղղէ՛ զաննք որ ամէն կերպով քու պատուէրներուք համեմատ շարժին անոնք:

Դիտան' աղօթիկ, գոհացում տալու համար հոգիին ամենէն ազնուազոյն և բարձրագոյն պահանջնն: Աղօթենք, երբ աշքերնիս կը բանանք օրուան լոյսին, իբրև Աստուծմէ մարդուն ընծայուած ամենէն քաղցր պարզենք աղօթենք՝ երբ կը ձեռնարկենք զործի մը, իբրև Աստուծմէ մեզի ցուցուած աշխատութեան մը, պատուով շահելու համար ապրուատը, աղօթենք՝ երբ կը ճաշակենք կամ կը վայելենք մեր հացն ու հանգիստը, իբրև Աստուծմէ մեզի ջնորհուած արդար բարիխներ. աղօթենք՝ երբ գիշերը կը կոխէ մեր արտեանունքներուն վրայ, մահանանցոյն խաղաղութեան մէջ մեզի բերելու համար նոր կազդոյր և նորոգուած ոյժի առաւելութիւններ. և ցանկանք. որ կեանքի տէրը և կենդանութեան բաշխողը մեզի շնորհէ իր լոյսին հետ պայծառութիւն մաքի, հացին և հանդիսանին հետ առողջութիւն նույոյ և մարմեսյ, աշխատութեան հետ գիտակցութիւն պարկեշտ գործունէութեան և պատուոյ, ու գիշերուան հանգիստին հետ անփանակար անդորրանքը հոգեկան երջանկութեան: Աղօթեցէք ամէնքդ ալ մանկական բարեմտութեամբ, ինչպէս ահա այս փոքրիկները, որնք մէկ ձեռքերին ֆամագիրը մը, միւս ձեռքերին լուցուած մոմ մը՝ երբ կ'երգեն կամ կ'աղօթեն մեզի հետ, ու երբ կը նային իսաշեալ Փրկչին պատկերին, փոքրիկ բանաւոր խորաններ են կարծես, սուրբ և անուշակ: Պահեցէք այդ խորանները անեղծ և ամբիճ՝ ձեր ընտանեկան յարկերուն մէջ. և որպէս զի կարենաք զաններ այդպէս պահել արդարեւ, աղօթենք իրենց հետ և վարժեցուցեք զիք զիրենք աղօթել միշտ ձեզ հետ, ձեր տան սեղանին առջև, իրենց անկողնին կըշտին, առաւատուն և երեկոյն, իրենց զարթումի և քունիք պահերուն: Աղօթքը, անհատապէս ընտանիքով և հաւաքար կամ առաջարկուած աղօթքը քրիստոնէին առ Աստուծած պարտականութեանց ամենէն անհատեցաներէն մին է:

Ենրարկուիլ Աստուծոյ, Երրորդ և գերազոյն պարտականութիւնը Քրիստոնէին՝ նկատմամբ Աստուծոյ, անոր ենթարկուիլ գիտնալն է: Ի զուր է յիշել զԱստուծոյ, ի զուր է աղօթիկ Աստուծոյ, իթէ չենք կրնար, իթէ չենք ուզեր ենթարկուիլ իրենքն: Երբեք գերազոյն իշխանութեան, որ անհակառակի իրաւունք ունի մեր անձին ու բավանդակ կեանքին վրայ: ԱՌ'չ իթ անոնք որ ինձի և Տէր Տէր կ'ըսեն, այլ անոնք որ իմ կամքը կը կատարեն, իմ ճշմարիտ հետեղուներ ենու:

Ո՛չ խօսք, այլ գործ. ոչ վարդապետութիւն, ոչ զո՞ւ, այլ բարոյակն, ոչ զո՞ւ, այլ զողմութիւն: Քրիստոնէութիւնը միայն հաւատք չէ, միայն հաւատք և յոյն չէ, այլ հաւատք, յոյն և սէր միանդամայն, ու ամենէն աւելի սէր, որ մաքուր միտքով և ազնիւ սիրուավ կատարուած զործն է, որ խսկապէս աստուծօրէն ապրուած կիանքն է: Աստուծածք սիրես, ընկերդ սիրես, ամբողջ օրէնքն ու կրօնքը այս երկու պատուիրաններուն մէջ կ'ամփոփուի: Այդ է Աւետարանի օրէնքը, ա'յդ է Աստուծոյ կամքը, սրոնց երբ կը համակերպինք, հընազանդամ, ենթարկուած կ'ըլլանք Աստուծոյ: Սէր Աստուծոյ, ապրայայտուած և իրագործուած ընկերին սիրով:

Քրիստոնեան՝ քրիստոնեայ պէտք է ըլլայ և երեխ, քրիստոնեա երեխ և ըլլայ իր հոգիին բոլոր կողմերուն, իր կեանքին բոլոր ուղղութիւններուն վրայ: Իր զգացուածներուն և մտածուածներուն, իր ձգումներուն և ճաշակներուն, իր սկզբունքներուն և համոզուածներուն, իր գաստիարակութեան և կենցաղին, իր հետապնդամ նպատակներուն և գործազրած միջնորդուն, իր յարաբերութիւններուն, այսինքն իր բարեկամութիւններուն և նոյնիսկ թշնամութիւններուն մէջ. այս վերջին բառը անշուշտ հասկալով Աւետարանի մատնաշած իմաստով:

Ասո՞ր համար է որ ճշմարիտ քրիստոնեաները, ի՞նչ ազգի և երկրի ալ պատկանին, բարձրորէն զգալի նմանութիւն մ'ունին իրարու հետ, աւելի թերես քան միենոյն ցեղին կամ հայրենիքին բայց ոչ նոյն կրօնքի մը պատկանողները, նմանութիւն հոգւոյ և իտէալի, որ անհունապէս աւելի հզօր է անշուշտ քան մարմնական և այլ ֆիզիկական նմանութիւնները. զի և հոգի

առաւել է քան զմարմին»։ Արդ, քրիստոնէական այդ հոգեկցութեան գաղտնիքը՝ քրիստոնէաներուն Աստուծոյ հանդէպ ենթարկումի իրենց գաղափարին բոլորովին մասնաւոր բնութեան մէջն է։ Անշուշտ ամէն կրօնք կը պատուիրէ Աստուծոյ հնազանդիլ, ու ինչպէս քրիստոնէութեան, այսպէս բոլոր կոծքներուն մէջ հաւատագույն ներուն մէջ աշխատութիւնն է այդ հնազանդութիւնը։ Բայց անկարեիլ է չնկատել տարբերութիւնը որ կայ այդ հնազանդութիւնը ըբանելու քրիստոնէական և ոչ քրիստոնէական կերպերուն մէջ։ Միւսներունը շատ անգամ կոյր համակերպութիւնն մը, սորկային բան մըն է, մինչ մերինը՝ որքան հաւասաքի՝ նոյնքան համոզումի լոյսէն ծնած դիտական ենթարկում մը։ Բան մը որ ինքնին ծնունդն է այս ըմբռանումիր՝ զոր անոնք ու մենք ունինք Աստուծոյ՝ մարդկութեան հանդէպ անենցած զիրքին նկատմամբ։ Աստուծած անոնց համար Տէր մըն է, գերազանց ինքնակալ մը, որ անոնք վեհապետի մը սասակութեամբ կ'իլև իրենց խոնճտանքին վրայ, իսկ մեկի համար գերազանց հայր մը, որ սիրալիք քաղցրութեամբ կը նախախնամէ մարդկութիւնը։ Ենովայի և ուրիշ աստուծաներու օրէնքը՝ հրաման է միշտ և պատզամ, Յիսուսինը՝ չնորն և սէրէ Պատարագիչ քառանան։ Ա. Խ. Խորուրդի նուրբագործութեան ամէնէն նուրբական վայրիկանին, լուկեայն աղօթած ատեն կ'ըսէ։ «Աստուծած ճշմարտութեան և Հայր ողբրութեան, գունանմք զքէն։ Որ ի վեր քան զերանելի նահապետացն զմբը պարտաւորելցու առաւել մեծարեցեր զնութիւն, գան զի նոցա Աստուծած կուկցար, իսկ մեկ՝ Հայր հաճեցար անունիլ զթալով։ Եւ այժմ Տէր՝ աղաշեմք զքեզ, զայսպիսի առ ի քէն զնորոց եւ զպատուական անունաղբութեանս շնորհ, որ ըստ օրէ պայժառացոցեալ ծաղկեցո՛ ի մէջ եկեղեցու բոյ սրբոյ։

Կանք առնինք այս գաղափարին առջև, որ մեզի կը ճշգէ Աստուծոյ հանդէպ մեր երրորդ պարտականութեան էնութիւնն ու եղանակը։ Էսինք թէ պարտինք լիշել զնուտուած, պարտինք աղօթել իրեն, և պարտինք ենթարկուի իրեն։ Պատի ենթարկուինք իր սիրոյն սիրով. սէր է իր օրէնքը, սէր պիտի լինի նաև մեր հնազանդութիւր, պիտի

չնազանդինք իրեւ շպթաներու զարնուած գերիներ, այլ ազատութեամբը մեր մոքին և խոնճտանքին։ Հաւատաքով լուսաւորուած մեր միտքը, և յոյսով քաղցրացած խիդը ամենէն մաքուր և ամրիծ գիտակցութիւնը պիտի զնեն մեր կամքին մէջ, ու մենէն Աստուծոյ պիտի երթանք մեր սիրոյն լոյսովը պայծառացած ճամբու մը վրայէն։ Այդ ճամբան կրնայ շատ անզամ լինել քարուտ, վանդակաւոր և փշալից, բայց սիրելի է անքանի որ կը տեսնուի իր բոլոր կողմէրուն վրայ։ Քրիստոնէան քրիստոնէական պիտի ըլւայ, Կ'ըսէի, իր կեանքի բոլոր կողմէրուն վրայ։ Կարելի չէ երևակայել միավոր հետանոս և սիրտովը միայն քրիստոնէայ հաւատացեալ մը, կամ հակադարձաբար. իր զգացումներով միայն և ոչ նաև համոզումն ենութիւն ալ՝ քրիստոնէայ։ Հոգինն զանազան կարողութիւնները կամ երեսները, իրեւ միւսնաց մասեր, իրարմով կազմուած. իրարմով բռնուած, իրեւ ամէնքն ապ նոյն սիդով սիած և նոյն աւելինով գոյզացած, պէտք է նոյն զարկով արոփեն, ինչպէս սիրտին չորչերը, որնք արիւնի նոյն շարժումով կենդանացած, նոյն բարախիւնով կը զարնեն։ Պէտք է սիրենք, գատենք, խորհինք, յուզուինք, զարկանանք, շակինք, գործենք, ապրինք, լնտանեկան, տնհատական, հասարակական, ալզային կեանքի և այլ ամէն գործառնութեանց մէջ մեր պարտականութիւններ կատարենք և մեր իրաւունքներուն տիրանանք, իրեւ հնազանելով միշտ Աստուծոյ կամքին, անոր ենթարկելով ինքինքնիս անբոնազբու յօժարութեամբ, մտազիւր սիրով և աննենք զստահութեամբ։ Ա. յու է քրիստոնէական ենթարկումը Աստուծոյ կամքին, որ անշուշտ բարոյապէս աւելի բարձրաբարժէք կը ներկայացնէ իրեւ մեր սիրոյն ընկլոզումը Աստուծոյ սիրոյն մէջ, մեր կամքին խանումը անոր կամքին և մեր համոզումն վերածումը անոր հաւատաքին։ Ցիւնք միշտ զԱստուծած, մեր մաքին հանապագօթեայ խոկումը թող լինի իր անունը։ Ալօթինք միշտ իրեն. մեր հոգիին խորանին օրնութեան խունկը թող լինի յաւէտ իր խորհուրդը. ու իր առըր կամքը օրէնքը մեր կեանքին, որպէսզի կարող լինինք ճշմարիտ սիրով և անկեղծ նուրիումով փառաւորել զԱմենասուրբ գերրորդութիւն, զհայր և զիրդի զստին։

ԱՐԾ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԷՋ

1. Ալլը սնունք. — Երրայեցիք իրրե հողագործ ժողովուրդ՝ բուսակեր էին, հետապէս մեծ սպասողներ աղի, զոր տաք եղանակին կը ժողվէին Մեսակալ Մովի եղերքէն, եթր լիճն մակերեսց ցածնար ու աղի խաւով մը ծածկուէր եղերքը:

Ոոր չէր ըմբռներ թէ կարիի ըլլայ սընանիլ անլի կերակուրներով (Յոր Զ. 6): Եղասի երկրորդ Դիրքէն կը սորվինք թէ և պատահ աղջ ուստեւ կը նշանակէր թագաւորին ծախքով ապրի (Բ. Եղր. Զ. 9): Յայտնի է որ հումայիցի զինուորները աղի համար մասնաւոր վարձք մը կ'ընդունէին ու այդ դրամը կը կոչուէր տափ զին (salaire): Այս բառը Օգոստոս Կեսարէն յետոյ գործածուեցաւ բոշակ նշանակութեամբ:

2. Ալլը զինագործութեանց անեն. — Մեր Տէր կ'ըսէ Աւետարանին մէջ, և Ամենայն զոհ աղիւ յակեսից (Մարկ. Թ. 48): Այսպէս՝ Պարսից թագաւորները Դարեկ ու Արտաշէս՝ գերութենէ զարձին Տաճարին համար պէտք եղած աղջ սուէին Եղայանին (Ա. Եղր. Զ. 9, կ. 22): Զոհագործութեան Անդամնին քովիքը կ'աղէին կ'եռուած կինդաւանիները, նաև ալիւրը, խունկը ու ընծայարիրուած նաշիները: Երթորորդ Տաճարին հիւխսակումը և աղի սննեակած մը շինուեցաւ այս նպատակով: Աւելցնենք թէ Զոհագործութեան Սեղանին աստիճաններուն վրայ աղ կը ցանէին, որպէսզի երթեւկողներու ստքիքը չսանէին:

Սուրբ Գիրքը առօխտ աղին կ'անուանէ այն յախտենական ու անքակտելի զաշինքը, զոր Աստուած հաստատեց Աւարոնի ու անոր որդիներուն հետո:

3. Ալլը Դաշին. — Զոհերու համար յատկացնաւած աղի կը կոյուէր աազ ուստիու: և Աղի ուսիտով մը, այսինքն անքակտելի գաշինքով մըն էր որ Աստուած Դաւիթին ու անոր սերանդին ընծայեց Իսրայէլի թագաւորութիւնը (Բ. Մաց. Ժ. 5): Այժման Արաբներուն քով, կը գրէ Հարութանք, և անոնք որ միասին նոյն կերակութը կ'ուտեն՝ միկնոյն դասակարգէն կը համար-

ուին: Միասին կերուած կերակութը նշան է ազգականութեան ու սկիզբ կու տայ անոր՝ թէ և նուազագոյն աստիճանով: Անոնք որ միկնոյն սեղանէն կ'ուտեն՝ աղի սւխտով կը միահան իրարու հետո (1): Հիմ ուղեկիրը մը կ'ըսէ. «Արաբները մեծ արժէք կ'ընծային աղին ու հացին, անապէս որ երր ու զին աղերսով մը դիմել մէկուն, որուն հետ միասին հաց կերած են, կ'ըսին. Մեր միասին կերած աղին ու հացին համար կատար է՛ ինդրանքու: Միկնոյն բանաձելը կը գործ ծածեն դարձակը՝ երրոր երգում ընեն բան մը հաստատելու կամ ուրանալու համարո՞» (2): Ուրեց հեղինակ մը կը գրէ: «Երրուներ երբ ուղեն պարտաւորութիւնն մը բատանձնել կամ իրենց բարեկամութիւնը ամբակին՝ հացի երկու պատառներ աղի մէջ կը թափախեն ու միասին կ'ուտեն: Այսպէս կնքուած զաշինք մը անքակտելի է աղին: Եթէ աննցմէ մէկը փորձէ քակիւ գաշինքը՝ միւսը կ'ըսէ անոր. Ասիկա անկարելի է. աղ ու հաց կերած ենք միասին: Այսպէս աննց լեզուին մէջ միասին աղ ու հաց ուստեւ՝ զաշինք կ'ուքիւ կամ բարեկամութիւնն ուխտել կը նշանակէն» (3):

Հատ հաւանական է որ աստուածաշնչն չական բացատրականութիւնը և ուխտ աղիս միեւնոյն իմաստութ ունի, գասնդի նախնի երրաշեցիք այս կէտին վրայ պէտք է ունիցած ըլլացին նոյն ըմբռնումը՝ ինչ որ այսօր ունին անապատի Սրաբները:

4. Ալլը թէ օքտակար, թէ վիասակար. — Նախնի Երրայեցիք շատ կը սիրէին աղած ձուկը: Ասոնցմէ էին Աւետարանի յիշած ձուկերը՝ հացերը բազմացնելու հրաշքին ատեն (Մատթ. Ժ. 17, Ժ. 31): Եղիսէ մարգարէ աղով լեցուն նոր կուժ մը ձկց Երթորովի ալրիբին մէջ ու հրաշքով առողջ շացուած անը ջուրը:

Եթէ ծովի աղը մեծ քանակութեամբ տարածուի հոգին վրայ՝ ամուլ ու անքեր կ'ընէ զան: Այսպէս՝ իր բնակիչներուն չարութեան պատճառու այնքան արգաւանդ-

(1) LAGRANGE, Etudes sur les religions sémitiques, Paris, 1905. Երես 252:

(2) DE LA ROCQUE, Voyage dans la Palestine, Amsterdam, 1718. Երես 137:

(3) JULLIEN, L'Egypte, Lille, 1891. Երես 273:

Ասզամի երկիրը աղի գաշտագետինի մը վերածեց Աստուած (Մադմ. Ճի. 34, Արքաք լթ. 32): Եթէ Խրայելացիները անհաւատարիմ ըլլան՝ Աստուած անոնց բնակութիւնը երկիր մը պիտի ընէ աղի ու տառապանքի, ինչպէս լրաւ Սոյոսն ու Գոմորր, Արտօնան ու Աերոյիմը (Բ. Օրէնք իթ. 23): Արմենէք տիրելով Ավեգեմին՝ և կործանեց քաջաքը ու աղ ցանեց հնաս, ցոյց տարու համար՝ թէ քաջաքին տեղը ամուշ ու անդինակ պիտի ըլլայ այնուհետեւ:

